№ 183 Հոկտեմբերի 3 (15) 1881 Հոկտեմբերի 3 (15) № 183

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են այսպէս
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Դարձեալ խնդրում ենք „ՄՇԱԿԻ“ բաժանորդներից, որոնք մինչև այժմ չեն վճարել մեր լրագրի անցեալ կամ ներկայ տարվայ բաժանորդական վճարը, շուտով հասցնել մեզ իրանց պարտքը։

Մի և նոյն ժամանակ յայտնում ենք որ „Մշակին“ կարելի է գրվել երեք ամսով, վճարելով 3 րուբլ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անիի աւերակների կենդանի պատկերներ. Նամակ Գորիսից. Նամակ Ս. Պետերբուրգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա. Գերմանիա. Նամակ Թիւրքիայից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԻԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

—

Կա՞յ արդեօք այնպիսի մի հայ մարդ, որը լսած չը լինէր Անի քաղաքի աւերակների մասին և խորին ցանկութիւն զգացած չը լինէր տեսնել հայոց անցեալ փառքի այդ վեհ արձանները, այդ ժամանակի հսկաների և բարբարոսութեան ուժերի դէմ պատերազմող ազգային ինքնաճանաչութեան պահապանները....

Այո՛, դժուար է գտնել այնպիսի մի հայ, որը խորին ցանկութիւն չը զգար այդ հրաշակերտ և անմահ պատմական յիշատակները տեսնելու։ Շատերը մեզանից ճանապարհի և այլ հանգամանքների դժուարութիւններին իրանց ենթարկելով, հասել են այդ աւերակներում անցեալ փառքը երևակայել։

Կը ցանկանայի՞ք արդեօք, ընթերցող, որ առանց ձեր սենեակից դուրս գալու, աչքի առաջ կարողանայիք ունենալ Անիի սքանչելի աւերակները, չեմ ասում նոցա պատկերները, այլ իսկապէս այդ աւերակները, որոնք ձեր աչքի առաջ ներկայանային իրանց բնական տեսքով և դրութեամբ, որպէս թէ դուք անձամբ նոցա առջև գտնվէիք։ Ի հարկէ դուք կը ցանկանաք այդ։ Եւ ահա դուք միջոց ունէք այդ բաղձանքը կատարելու, ունենալով ձեր սենեակում Բագրատունեաց մայրաքաղաքի կենդանի պատկերները։ Գ. Քիւրքճեանի աշխատած Անիի աւերակների „ծաւալագիտական ժողովածուն“ ծառայում է իսկ այդ նպատակին, ցոյց տալով ձեզ Անին նորա ներկայ բնական տարածութեամբ և տեսքով։ Այդ զմայլեցուցիչ տեսարանների դիտողը կարող է բացականչել Նալբանդեանի բանաստեղծութեան հետևեալ խօսքերը, որ նա արտասանել է Օշական գիւղում, մի փոսի մէջ մնացած Մեսրոպի գերեզմանի առաջ *)

Ո՛հ, Մեսրոպ, ների՛ր դու ինձ,
Ինչպէս որդւոյ քո ազգի,—
Ապերախտ եմ առաջիդ,
Ինչպէս անդամ ամբողջի . . . .

Ապերախտ չե՞նք միթէ մենք Անիի աւերակների առաջ. . .

Գ. Քիւրքճեանը, ինչպէս արդէն յայտնի է „Մշակից“, ներկայացրեց հնագիտական ժողովին մի քանի մեծ պատկերների հետ վերոյիշեալ ժողովածուն, որը արժանացաւ առանձին ուշադրութեան գիտնականների կողմից։ Տիեզերահռչակ Վիրխովն անգամ հիացած էր տեսնել այդ աշխատութեան նրբութիւնից և աւերակների ճարտարապետութեան գեղեցկութիւնից և յայտնել է, որ կը հրաւիրի ուսումնական աշխարհի ուշադրութիւնը դէպի այս մեծագին յիշատակները, որոնց մասին, յոյս ունենք, կը խօսեն Բեռլինի լրագիրները։ Իսկ մենք, հայերս, կամ մոռանում ենք, կամ դժուարութեամբ ենք մտածում այն հանգամանքի վրա, թէ ի՞նչ աշխատութիւններով և ի՞նչ զոհաբերութիւններով կարողացել է պ. Քիւրքճեանը հասնել իր փառաւոր նպատակին. Բաւական է այստեղ մտաբերել միայն այն, որ այդ արժանի ազգային գործիչը շատ տարիներ է նուիրել բացառապէս Հայաստանի աւերակները ուսումնասիրելու և նկարելու համար, առանց խնայելու իր վերջին միջոցները, ահա իր ծանր աշխատանաց արդիւնքը նուիրում է ազգին, տալիս է հնար ամենայն հայի ունենալ իր սենեակում Բագրատունեաց մայրաքաղաքի աւերակների կենդանի տեսարանները։

Խորհուրդ ենք տալիս հայերին և բոլոր հայոց ուսումնարաններին ձեռք բերել այդ աւերակների „ժողովածուն“ հանդերձ ծաւալադիտակով (стереоскопъ).

Հասկանանք վերջապէս որ մենք պարտաւոր ենք գնահատել ազգային մշակների աշխատութիւնները, նրանց ծանր չարչարանքները, պարտաւոր ենք քաջալերել նրանց աշխատանքները իրանց փշոտ ճանապարհներում, որպէս զի անընդհատ ունենանք ազգային գործիչներ։

Միքայէլ Սաղաթէլեանց

ՆԱՄԱԿ ԳՈՐԻՍԻՑ

—

Սեպտեմբերի 22

Շրջելով այս ամառ անձնական գործով զանազան տեղեր, վերջապէս այցելեցի և Սիւնեաց գաւառը, որը մի կողմից իր գեղեցիկ դիրքով և միւս կողմից իր մնացեալ դրութեամբ արժանի է ուշադրութեան։

Սիւնեաց վիճակին բնութիւնը առատօրէն բաշխել է ամենայն բան. կանաչ դաշտեր, գեղեցիկ և լայնատարած անտառներ, ծաղկաւէտ սարեր, սառը, համեղ և անթիւ աղբիւրներ, առողջարար և մաքուր օդ, մի խօսքով ամենայն ինչ, ինչ որ հարկաւոր է մի երկրային դրախտ կոչվելու համար։

Այդ գաւառը բաղկանում է իննսուն հայաբնակ գիւղերից և հինգ հազար տուն հայ ժողովրդից, որոնք հարստութեամբ պատկանում են միջին դասին, իսկ մտաւոր զարգացմամբ վերջին դասին։

Մի կողմից ես ինձ ամեն կերպ երջանիկ էի համարում, որ բաղդ եմ ունեցել տեսնել աշխարհիս երեսին այդպիսի մի վայելուչ և գեղեցիկ դրախտ, իսկ միւս կողմից շատ տխուր տպաւորութիւն գործեց ինձ վրա, որ անցնելով քանի մի գիւղերում, ես ամեն մի գիւղում առնում էի հետևեալ պատասխանը, տղայ, մենք ի՞նչ պիտի անենք ուսումնարանը, մենք մինչև այժմ այսպէս ենք եղել, և այսպէս էլ կերթանք։

Շրջելով շատ գիւղեր, ես տեսնում էի առոյգ և առողջակազմ տղաներ, որոնցից մեծ մասը, առաւօտից մինչև երեկոյ պարապ քարշ էին գալիս փողոցներում, իսկ ոմանք մէկ մէկ անասուն արած առաջները դաշտերում արածացնում էին, որոնց թէ դէմքից և թէ սուր պատասխաններից երևում էր, որ դրանք ունեն այնպիսի առողջ դատողութիւն և ընդունակութիւն, որ ժամանակին կարող են լինել պիտանի անդամ հասարակութեան։ Բայց ի՞նչ անեն խեղճերը. այդ ամբողջ վիճակում չը կայ և ոչ մի օրինաւոր ծխական դպրոց, որ կարողանային փշրել տգիտութեան և խաւարի կապանքները։ Եւ արդարև Սիւնեաց վիճակի այդ իննսուն գիւղերից և ոչ մէկը չունի մէկ ծխական դպրոց։ Չը գիտեմ, արդեօք այդ մարդիկ երբ կարդում են լրագիրներ և տեսնում են որ ամեն տեղ աշխատում են դպրոց հիմնել, և բոլորը վազում են դէպի լուսաւորութիւն, իրանք էլ ամաչում են, մտածում են դրանց համար, թէ դարձեալ տգէտ մնալով միմիայն երազում են վազել դէպի Թիֆլիս, Բագու և այլ քաղաքներ, իրանց անյագ գրպանը անպակաս կերպով լցնելու։

Արդեօք չէ ամաչում այդ գաւառը, որ իր իննսուն հայաբնակ գիւղերով չէ կարողանում մէկ ծխական դպրոց հիմնել։

Երբ ես տեսնում եմ նրանց ժառանգներին, մտածում եմ՝ արդեօք ծնողների քարացած և անզգայ սիրտը չէ ցաւում իրանց որդիների վրա, որոնք չնայելով իրանց լի գրպանը միշտ դատարկում են լաւ ձիու, լաւ հրացանի համար, և իրանց օրերը անպատակ անտառների խորքերումն են անցկացնում։

Միթէ սրանց էլ պէտք չէ ուսում, գիտութիւն, լուսաւորութիւն, բայց կա՞յ արդեօք մի մարդ՝ որ 24 ժամից գոնէ կէս ժամը նուիրի այդ նպատակին և մտածէ թշուառ ժողովրդի դրութեան վրա, կարծեմ ոչ, որովհետև նրա խաւար և տգէտ լինելը յարմար միջոց է տալիս գործողներին իրանց գրպանները լցնելու։ Եթէ գործողները աշխատում են, որ ժողովուրդը միշտ խաւար և տգէտ լինի, ուրեմն ով պէտք է հոգայ լուսաւորութեան համար, եթէ ոչ ինքը ժողովուրդը որ պէտք է նախ և առաջ թօթափէ իրանից խաւարի ծանր լուծը և հոգայ իր, և իր զաւակների վրա։ Եւ այնուհետև կարող է քաջաբար դիմադրել այդ անիրաւ գործողներին։

Ա. Յ.

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Սեպտեմբերի 23-ին

Անցեալ տարվայ վերջին թւերում, երբ ճանապարհ ընկաւ այստեղից դէպի Կ. Պոլիս ձեր աշխատակից և իմ բարեկամ Գրիգոր Նիկողոսեան, մեծ բարեկամի տպաւորութեան տակ յիշեցի բարեկամիս ազգօգուտ անցեալը և նրա ընտրած արդիւնաւոր նպատակները Կ. Պոլսի մէջ և գրեցի ձեզ մի նամակ այդ առիթով։ Նրա մէջ ակամայից դուրս թռաւ գրչիս տակից որդեգիր «Մշակի» բառերը Նիկողոսեանի վերաբերմամբ։ Այդ բառերը առաջին արտասանողը, եթէ չեմ սխալվում, ես եմ եղել, վասնորոյ պարտաւորութիւն եմ համարում առանձին վաւերացման համար բերել մի նոր ապացոյց։

Յիրաւի, թէպէտ Գրիգոր Նիկողոսեանի ազգային գործունէութեան ուղղութիւնը և բնաւորութիւնը գծագրված էր շատ որոշ կերպով դեռ Բագուի գիմնազիոնում նրա ինձ հետ միասին աշակերտութեան ժամանակ (1871—1872), երբ մի խումբ իր ընկերների հետ զանազան ազգային ձեռնարկութիւններով նա ոգևորում էր քաղաքի հայ հասարակութիւնը, սակայն ընթերցող հայ հասարակութիւնը ճանաչեց նրան միայն այն օրից, երբ մտաւ «Մշակի» մէջ Էրզրումից գրած իր նամակներով։ Այդ օրից մինչև այսօր, որ մօտ երեք չորս տարի է, հայ հասարակութիւնը շարունակում է անդադար տեսնել «Մշակի» դրօշակի տակ մի նոր զինուոր, որը գրիչը ձեռքին սկսեց քարոզել «Մշակի» գաղափարները։ Էրզրումի գաղթականութիւնը ամեն տեսակ ջանքերով խեղդելուց յետոյ, եկաւ այդ զինուորի համար մի աւելի լայն ասպարէզ, որ է Հայաստանի սովի դէմ պրոպագանդան «Մշակի» դրօշակի տակ, եկաւ անցեալ տարվայ ռուս մամուլի մէջ նրա գործածը, հապա վերջապէս նրա գործունէութեան ժամանակը և Կ. Պոլսի ազգայինների մէջ, դարձեալ «Մշակի» աջակցութեամբ։

Մօտ եօթը ամիս է արդէն, որ մենք ուշի ուշով հետամուտ ենք մեր բարեկամի այդ գործունէութեան և «Մշակի» նրա ցոյց տուած աջակցութեան իր առաջնորդող յօդուածներով։ Մենք տեսնում էինք, ինչպէս մեր բարեկամի գրչի ուժգին հարուածներից Կ. Պոլսի փափկարարոյ ինտելլիգենցիան բուռն շարժումներ էր անում ընդդէմ և ի նպաստ ձեր աշխատակցի. մենք տեսնում էինք ամենամեծ ուրախութեամբ այն էներգիան, որով մեր բարեկամը առաջ էր մղում «Մշակի» գաղափարները, քաջութեամբ մաքառելով մի ամբողջ լեգէոն թուլամորթ և թուլամիտ ինտելլիգենցիայի հետ. մենք տեսնում էինք, ինչպէս «Մշակի» և Նիկողոսեանի մի քանի գաղտնի և յայտնի անհաշտ թշնամիները անդադար դաւեր էին լարում հեռի հիւսիսից մինչև Կ. Պոլիս մեր բարեկամի դէմ. մենք տեսնում էինք վերջապէս, ինչպէս անշարժ նայում էր այս մաքառումների վրա մեր ռուսաց ինտելլիգենցիան. բայց մենք սրտատրոփ լռութիւն էինք պահում, քաջ ճանաչելով «Մշակի» ընտրած և երևան բերած զինուորի անսպառ էներգիան։ Վերջապէս մենք էլ չը կարողացանք պահել մեր լռութիւնը, վասնորոյ անցեալ անգամ արդէն հրապարակապէս մեզ էլ բոլորովին համամիտ և համակարծիք յայտնեցինք Նիկողոսեանի քարոզած բոլոր գործնական մտքերին Կ. Պոլսի մէջ։

Իսկ այս նամակով, մի շատ նշանաւոր դէպքի առիթով, մենք շտապում ենք մի կողմից բոլորից բարևել և խնդակից լինել «Մշակին» և մեր բարեկամին, իսկ միւս կողմից այդ դէպքի վրա ուշադրութիւն հրաւիրել թէ տաճկահայ և թէ ռուսահայոց ինտելլիգենցիայի, որ չէր դադարում ամեն տեսակ խոչընդոտներ յարուցանել առհասարակ «Մշակի» ձեռնարկած այնչափ արդիւնաւոր պրոպագանդայի յաջողութեան դէմ։

Այսօր երջանիկ եմ համարում ինձ, ինչպէս գաղափարակից ձեզ և իմ համակրելի բարեկամիս, որ տեսնում եմ կատարեալ և այնչափ փառաւոր յաղթութիւն մեր գաղափարների Կ. Պոլսի մէջ. այսօր տեսնում ենք ոչ միայն Միացեալ ընկերութիւնը մի որոշ պրոգրամով՝ Հայաստանի մէջ տարրական ուսմունք տարածելու մտքով, այլ լսում ենք արժանահաւատ աղբիւրից թէ՝ Ներսէս պատրիարքի սեփական նախաձեռնութեամբ կազմվում է Կ. Պոլսի մէջ մի համազգային ընկերութիւն տնտեսական միութիւն հայոց անունով։ Ուրեմն ինչ յայտնվեց. Այն, որի դէմ մաքառում էր Կ. Պոլսի ինտելլիգենցիան այնչափ յանդուգն կերպով իր լրագիրներում. այն, որի դէմ բարբանջում էր միշտ նոյնպէս մի յայտնի պառաւած լրագիր, այն, որի համար Նիկողոսեանը հարիւր ու մէկ վիրաւորանք ու հայհոյանք ստացաւ։ Այդ ա-

---

*) Աւելորդ չէ այստեղ նկատել՝ որ Մեսրոպի գերեզմանի վրա կառուցված է վերջին տարիներս հոյակապ եկեղեցի։

Մ. Ս.